



**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2025 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2**

Համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով
Երկուշաբթի, 22 հունիսի 2026 թ., 14:05

Մասնակցեցին՝

Բաժնետերեր

10 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի խորհուրդ

Գագիկ Զաքարյան (նախագահ)

Վարդան Աթայան

Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ

Ռուբեն Ինջիկյան

Կարինե Մինասյան

Հրահատ Արզումանյան

Արտեմ Կոնստանդյան

Էդուարդ Զամանյան

Բանկի Վարչություն

Մեսրոպ Հակոբյան (նախագահ)

Արարատ Ղուկասյան

Գոհար Գրիգորյան

Օվսաննա Առաքելյան

Գուրգեն Ղուկասյան

Դավիթ Պետրոսյան

Վաղինակ Ստեփանյան

Արթուր Ապերյան

Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ

ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչ Տիգրան Հարությունյան

Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյան

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ տնօրեն Իրինա Գևորգյան

Հայաստանյան ընկերությունների ներկայացուցիչներ

Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 22.06.2026 թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 27.05.2026 թ. դրությամբ:

Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է «Ժողովուրդ» օրաթերթում և azdarar.am կայքում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին 29.05.2026 թ.-ին:

Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 22.06.2026 թ.-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը

կազմվել է 22.06.2026 թ.-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ծայների քանակը կազմել է 191,254,472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ծայնի իրավունք ունեցող 183,678,063 բաժնետոմս կամ տոկոսային հարաբերությամբ 96.04%-ը:
Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց մասնակիցներին:

Նշելով, որ ընթացիկ տարում Յունիբանկը նշում է իր հիմնադրման 25-ամյակը՝ **Գագիկ Զաքարյանն** ընդգծեց, որ իր գործունեության տարիների ընթացքում Բանկն անցել է զարգացման նշանակալի ուղի և զբաղեցրել է ամուր դիրքեր երկրի ֆինանսական շուկայում: Շարունակական աճի արդյունքում Բանկի ակտիվների ծավալը հասել է 400 մլրդ ՀՀ դրամի, և տարին ամփոփվել է 9,8 մլրդ ՀՀ դրամի չափով զուտ շահույթով, որից 9,3 մլրդ ՀՀ դրամը նախատեսվում է ուղղել սովորական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժինների վճարմանը:

Առանձին ընդգծվեց Բանկի ներդրումային գործիքների հաջող զարգացումը, այդ թվում՝ բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից (IPO) հետո տասը տարիների ընթացքում սովորական բաժնետոմսերի շուկայական արժեքի՝ շուրջ 70%-ով աճը, ինչը վկայում է ներդրողների կողմից ցուցաբերվող վստահության բարձր մակարդակի մասին:

«Moody's Ratings» միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Յունիբանկի ավանդների երկարաժամկետ B1 վարկանիշը և պահպանել «Կայուն» կանխատեսումը, ինչն արտացոլում է ակտիվների որակի և ֆինանսական արդյունքայնության զգալի բարելավումը:

Գագիկ Զաքարյանը նշեց, որ հետևելով իր «Բանկ և ավելին» կարգախոսին, Յունիբանկը զարգացնում է ոչ միայն ավանդական բանկային ծառայությունները, այլև ներդնում է նորարարական տեխնոլոգիական լուծումներ՝ ընդլայնելով հաճախորդների հնարավորությունների շրջանակը: Աջակցելով Հայաստանում ֆինտեխ ոլորտի զարգացմանը՝ Յունիբանկը ավանդաբար հանդես է գալիս որպես Երևանում անցկացվող Միջազգային ֆինտեխ համաժողովի գործընկեր, որը մեկ հարթակում միավորում է ֆինանսական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներին:

2025 թվականին Յունիբանկը արժանացել է մրցանակների Visa և Mastercard միջազգային վճարային համակարգերի կողմից, ինչը հաստատում է Բանկի ձեռքբերումների ճանաչումը վճարային ենթակառուցվածքի զարգացման ոլորտում: Բանկը նաև շարունակել է իր ակտիվ գործունեությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում՝ աջակցություն ցուցաբերելով կրթական, մարզական և մշակութային միջոցառումներին:

Գագիկ Զաքարյանը վստահություն հայտնեց, որ Յունիբանկի պրոֆեսիոնալ թիմը, նորարարական մոտեցումները և բարձր գործարար հեղինակությունը ամուր հիմք կհանդիսանան հետագա դինամիկ զարգացման ու նոր բարձունքների նվաճման համար:

Ամփոփելով՝ **Գագիկ Զաքարյանը** երախտագիտություն հայտնեց բաժնետերերին, գործընկերներին, Կենտրոնական բանկին, Հայաստանի բանկերի միությանը, աուդիտորներին և հաճախորդներին՝ աջակցության ու վստահության համար, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց Յունիբանկի ղեկավարությանը և թիմին՝ արդյունավետ և նվիրված աշխատանքի համար:

Գագիկ Զաքարյանը խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ օրակարգի առաջին հարցով նախատեսված հաշվետվությունը ներկայացնելու համար:

Հարց 1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց Յունիբանկի 2025 թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ մակրոտնտեսական մարտահրավերների պայմաններում Յունիբանկը ժամանակին ադապտացվեց շուկայական միջավայրին և շարունակեց ամրապնդել իր դիրքերը Հայաստանի բանկային շուկայում:

Բանկի գործունեությունը կենտրոնացած էր կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության համակարգերի հետագա զարգացման, գործառնական արդյունավետության աճի, սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացման վրա: Միանալով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին՝ Բանկը վերահաստատեց իր հանձնառությունը գործընթացների թափանցիկության հետագա ամրապնդմանը, կառավարման արդյունավետության և հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաև Բանկի գործելակերպի՝ կորպորատիվ կառավարման լավագույն չափանիշներին համապատասխանեցմանը: Իրականացվել են անկախ խորհրդատուների՝ միջազգային KPMG և Civitta ընկերությունների առաջարկությունները, որոնք միտված էին ներքին գործընթացների կազմակերպման և հաճախորդների հետ փոխգործակցության կատարելագործման միջազգային լավագույն փորձի ներդրմանը:

Տեխնոլոգիական փոխակերպման երկարաժամկետ ռազմավարության իրականացմանը զուգահեռ Բանկն իրականացրել է միջոցառումներ՝ ուղղված դիսկերի կառավարման համակարգի, հսկողական մեխանիզմների ամրապնդմանը, ինչպես նաև նորմատիվահեն մոտեցումների ներդրմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վարկային պորտֆելի որակի պահպանմանը և հիմնական ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովմանը:

Ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման ռազմավարության իրականացման շրջանակներում Յունիբանկը հանդես եկավ որպես անժամկետ պարտատոմսերի առաջին թողարկող, ինչպես նաև իրականացրեց սովորական և արտոնյալ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում, որոնց հաջող տեղաբաշխումը ընդլայնեց մանրածախ և միներիտար ներդրողների շրջանակը:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց ֆինանսական արդյունքների, մանրածախ և կորպորատիվ բիզնեսի ոլորտներում գրանցած հաջողությունների մասին համառոտ տեղեկատվությունը: Նշեց, որ մանրածախ ուղղությունը պահպանել է բիզնես կառուցվածքում իր գերիշխող դիրքը՝ 71% մասնաբաժնով: Աճի հիմնական շարժիչ ուժը շարունակել է մնալ հիփոթեքային վարկավորումը, միաժամանակ կատարելագործվել է նաև գործիքակազմը, իսկ քարտային ուղղությունը առանձնացվել է որպես առաջնահերթային:

Կորպորատիվ ուղղությամբ նույնպես արձանագրվել է դրական դինամիկա, ընդ որում՝ վարկային պորտֆելի 37% աճի պայմաններում պահպանվել է վերջինիս բարձր որակը: Բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը Գերմանահայկական հիմնադրամի հետ ՓՄՁ սուբյեկտների աջակցության ծրագրերի շրջանակում, հաշվի առնելով լիզինգային ֆինանսավորման նկատմամբ կայուն բարձր հետաքրքրությունը՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նշյալ ուղղության զարգացմանը: Բանկը նաև շարունակել է ակտիվորեն աջակցել շրջակա միջավայրի պահպանությանը և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը միտված նախագծերին:

Վարչության նախագահը նշեց, որ վարկային պրոդուկտների կատարելագործմանը զուգահեռ Բանկն իրականացրել է միջոցառումներ՝ ուղղված տեխնոլոգիական ենթակառուցվածքի զարգացմանը և ոչ վարկային ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, ինչը նպաստել է ոչ տոկոսային եկամուտների էական աճին:

Բանկի կադրային քաղաքականությունը շարունակում էր միտված լինել պրոֆեսիոնալ և մոտիվացված թիմի պահպանմանը: Աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով իրականացվել են վերապատրաստման ծրագրեր՝ թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության, դիսկերի կառավարման և ներքին աուդիտի ուղղություններով: Իրականացված միջոցառումները նպաստել են Բանկի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և աշխատակիցների հոսունության մակարդակի նվազեցմանը՝ այն հասցնելով պատմականորեն ամենացածր ցուցանիշի:

Մեսրոպ Հակոբյանը նշեց, որ 2026 թվականի համար Բանկն իր առջև դրել է 13,1 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթի ստացումն ապահովելու նպատակ՝ ներդրումային գրավչության բարձրացմանը, տեխնոլոգիական հարթակի զարգացմանը, հաճախորդամետ մոդելի ամրապնդմանը և կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրմանն ուղղված ռազմավարական ուղենիշերի իրականացման միջոցով:

Ավարտելով ելույթը՝ **Մեսրոպ Հակոբյանը** Բանկի Վարչության անունից շնորհակալություն հայտնեց ներդրողներին՝ ցուցաբերած վստահության համար, հաճախորդներին և գործընկերներին՝ Յունիբանկն ընտրելու համար, Բանկի ողջ թիմին՝ եռանդուն և պրոֆեսիոնալ աշխատանքի համար, և վստահություն հայտնեց Յունիբանկի հետագա հաջող զարգացման վերաբերյալ:

Բոլորին հաջող տարի մաղթելով՝ Վարչության նախագահը խոսքը փոխանցեց Աննա Բադոյանին՝ քվեարկության արդյունքները ներկայացնելու համար:

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 183,678,063 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 2. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին:
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ աուդիտորական ընկերության եզրակացությունը ներկայացնելու մասին:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված 2025 թ. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջների համաձայն, հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ 43 107 570 հազ. ՀՀ դրամ
2. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 32 126 203 հազ. ՀՀ դրամ
3. Իրական արժեքով ներդրումային արժեթղթեր՝ 1 849 500 հազ. ՀՀ դրամ
4. Ներդրումային արժեթղթեր՝ 13 536 828 հազ. ՀՀ դրամ
5. Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր՝ 9 280 499 հազ. ՀՀ դրամ
6. Հաճախորդներին տրված վարկեր՝ 264 557 191 հազ. ՀՀ դրամ
7. Հիմնական միջոցներ՝ 12 109 027 հազ. ՀՀ դրամ
8. Ոչ նյութական ակտիվներ՝ 3 730 630 հազ. ՀՀ դրամ
9. Այլ ակտիվներ՝ 7 556 540 հազ. ՀՀ դրամ
10. Ընդամենը ակտիվներ՝ 393 782 348 հազ. ՀՀ դրամ
11. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 15 795 557 հազ. ՀՀ դրամ
12. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 271 106 891 հազ. ՀՀ դրամ
13. Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթեր՝ 25 718 962 հազ. ՀՀ դրամ
14. Փոխառու միջոցներ՝ 18 105 978 հազ. ՀՀ դրամ
15. Այլ պարտավորություններ՝ 1 222 909 հազ. ՀՀ դրամ
16. Ընդամենը պարտավորություններ՝ 343 588 084 հազ. ՀՀ դրամ
17. Բաժնետիրական կապիտալ՝ 23 425 447 հազ. ՀՀ դրամ
18. Էմիսիոն եկամուտ՝ 14 179 227 հազ. ՀՀ դրամ
19. Գլխավոր պահուստ՝ 1 315 598 հազ. ՀՀ դրամ
20. Այլ պահուստներ՝ 1 453 153 հազ. ՀՀ դրամ
21. Չբաշխված շահույթ՝ 9 820 839 հազ. ՀՀ դրամ
22. Ընդամենը սեփական կապիտալ՝ 50 194 264 հազ. ՀՀ դրամ
23. Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ՝ 393 782 348 հազ. ՀՀ դրամ:

Եկամուտների և ծախսերի կառուցվածքը՝

- զուտ տոկոսային եկամուտներ՝ 20 263 495 հազ. ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտներ՝ 3 720 230 հազ. ՀՀ դրամ
- գործառնական եկամուտներ մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսեր՝ 31 367 160 հազ. ՀՀ դրամ
- շահույթ մինչև հարկումը՝ 11 907 007 հազ. ՀՀ դրամ
- շահութահարկի գծով ծախս՝ (2 090 456) հազ. ՀՀ դրամ
- տարվա շահույթ՝ 9 816 551 հազ. ՀՀ դրամ

Դրամական միջոցների շարժը՝

- Գործառնական գործունեության համար (օգտագործված)/գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը՝ (14 450 765) հազ. ՀՀ դրամ
- դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ (18 496 530) հազ. ՀՀ դրամ
- դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից՝ 8 103 671 հազ. ՀՀ դրամ
- դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից՝ 15 441 715 հազ. ՀՀ դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ՝ 5 048 856 հազ. ՀՀ դրամ

- արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ 737 900 հազ. ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ՝ 37 320 814 հազ. ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ՝ 43 107 570 հազ. ՀՀ դրամ:

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ անկախ աուդիտորական ընկերության եզրակացության համաձայն՝ Բանկի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. ֆինանսական հաշվետվությունները՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 183,678,063 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 3. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի 2025 թ. հաշվետվությունը հաստատելու, Բանկի ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացությունը ներկայացնելու մասին:

Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասովի հարգելի պատճառով բացակայելու հետ կապված հաշվետվությունը ներկայացրեց Ներքին աուդիտի տնօրենի տեղակալ Արտակ Փաշինյանը:

Արտակ Փաշինյանը ներկայացրեց, որ ներքին աուդիտի որակի և արդյունավետության հետագա բարձրացման նպատակով 2025 թվականի ընթացքում Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները, հանդիսանալով Հայաստանի ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA Armenia) անդամներ, մասնակցել են մասնագիտացված դասընթացների, սեմինարների և վերապատրաստումների՝ ուղղված մասնագիտական գիտելիքների ընդլայնմանը, կարողությունների զարգացմանը և գործնական հմտությունների կատարելագործմանը:

Հաշվետու տարվա ընթացքում աուդիտորական ստուգումները հիմնականում իրականացվել են բարձր և միջին ռիսկայնության կատեգորիաներին դասված Բանկի գործունեության ուղղությունների, գործառույթների, բիզնես գործընթացների և տարածքային ստորաբաժանումների մասով:

Ներկայացնելով իրականացված ստուգումների ուղղությունները՝ **Արտակ Փաշինյանը** նշեց, որ աուդիտն իրականացվել է ինչպես տարեկան աշխատանքային պլանի համաձայն, այնպես էլ արտապլանային, ստուգումներն ու գնահատումները ներառել են Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ Ներքին աուդիտի նորմատիվային կարգավորմանը, տեղեկատվական տեխնոլոգիաներին և տեղեկատվական անվտանգությանը, ռիսկերի կառավարմանը, վարկավորման գործընթացներին, դրամարկղային և գործառնական գործառնություններին առնչվող հարցերը, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում սահմանված պահանջների, FATCA պահանջների պահպանման և ներքին հսկողության համակարգի արդյունավետության գնահատումը: Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև հետստուգում՝ արտաքին և Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների վերացման ընթացքը գնահատելու նպատակով, ինչպես նաև «Յունիգրուպ» ֆինանսական խմբի, մասնավորապես՝ «ՌեԳո Ինշուրանս» ընկերության գործունեության և ներքին հսկողության արդյունավետության գնահատում:

Արտապլանային ստուգումների ընթացքում վերլուծվել են պատժամիջոցների ցանկերի հետ ավտոմատ համադրման գործընթացները, խոշոր վարկերը և վերջիններիս գծով պահուստների ձևավորման ճշգրտությունը:

Իրականացված ստուգումների արդյունքներով ներկայացվել են մի շարք առաջարկություններ, կազմվել են միջոցառումների ծրագրեր, որոնց կատարման նկատմամբ իրականացվում է հետևողական հսկողություն:

Ներկայացնելով Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ Ներքին աուդիտի կարծիքի հիմքում ընկած միջոցառումները՝ **Արտակ Փաշինյանն** ամփոփեց, որ Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության

իրականացման նվազագույն պայմաններին:

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 183,678,063 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 4. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրության և քանակական կազմը հաստատելու մասին:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ Բանկի Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին են ներկայացվում Խորհրդի ընտրության վերաբերյալ հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի,
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Ջորջ Պիսկովին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտին (անկախ), Ռուբեն Ինջիկյանին (անկախ), Կարինե Մինասյանին (անկախ),
- ընդգրկել Արթուր Նախշիկյանին Խորհրդի կազմում որպես անկախ անդամ՝ 22.06.2026 թ.-ից մինչև 30.06.2027 թ. պաշտոնավարման ժամկետով,
- հաստատել Խորհրդի հետևյալ կազմը՝ Գագիկ Զաքարյան, Ջորջ Պիսկով, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ (անկախ), Ռուբեն Ինջիկյան (անկախ), Կարինե Մինասյան (անկախ), Արթուր Նախշիկյան (անկախ):

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացել են ձայների հետևյալ քանակը.

Գագիկ Զաքարյան՝ 27,930,343 ձայն

Ջորջ Պիսկով՝ 27,044,476 ձայն

Վարդան Աթայան՝ 25,673,865 ձայն

Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ՝ 25,610,309 ձայն

Ռուբեն Ինջիկյան՝ 25,654,008 ձայն

Կարինե Մինասյան՝ 25,624,751 ձայն

Արթուր Նախշիկյան՝ 25,604,751 ձայն

Դեմ՝ 0 ձայն

Թեկնածուների գծով ձեռնպահ՝ 192,000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.10%

Անվավեր՝ 343,560 ձայն

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի, վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Ջորջ Պիսկովին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտին (անկախ), Ռուբեն Ինջիկյանին (անկախ), Կարինե Մինասյանին (անկախ), ընդգրկել Արթուր Նախշիկյանին Խորհրդի կազմում որպես անկախ անդամ՝ 22.06.2026 թ.-ից մինչև 30.06.2027 թ. պաշտոնավարման ժամկետով, հաստատել Խորհրդի հետևյալ կազմը՝ Գագիկ Զաքարյան, Ջորջ Պիսկով, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ (անկախ), Ռուբեն Ինջիկյան (անկախ), Կարինե Մինասյան (անկախ), Արթուր Նախշիկյան (անկախ):

Հարց 5. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշում ընդունելու մասին:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. գործունեության ֆինանսական արդյունքները և «Շահութաբաժինների վճարման քաղաքականության» դրույթները, Բանկի Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է՝

- Բանկի կուտակված շահութից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 9,325,724,980.60 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 23.06.2026 թ.-ից մինչև 30.06.2026 թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2025 թ. զուտ շահույթի 5%-ը:

Հաշվի առնելով Բանկի 2025 թ. գործունեության ֆինանսական արդյունքները՝ բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 9,325,724,980.60 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 23.06.2026 թ.-ից մինչև 30.06.2026 թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2025 թ. զուտ շահույթի 5%-ը:

կողմ՝ 183,678,063 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 6. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը» ուժը կորցրած ճանաչելու և կիրառությունից հանելու մասին:

Նախագծերի և ստանդարտների ներդրման գծով Վարչության նախագահի տեղակալ Վաղինակ Ստեփանյանը ներկայացրեց, որ Բանկի Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել և կիրառությունից հանել 06.05.2024 թ. բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ 16.01.7 կողավորմամբ հաստատված «Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը»՝ այն Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և միջազգային փորձի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից ելնելով:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց ուժը կորցրած ճանաչել և կիրառությունից հանել 06.05.2024 թ. բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ 16.01.7 կողավորմամբ հաստատված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը»:

կողմ՝ 183,031,894 ձայն կամ մասնակիցների ձայների 99.65%

դեմ՝ 646,169 ձայն կամ մասնակիցների ձայների 0.35%

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 7. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականության» հաստատման, փոփոխման և լրացման վերաբերյալ որոշումների ընդունման լիազորությունը Բանկի Խորհրդին փոխանցելու մասին:

Վաղինակ Ստեփանյանը ներկայացրեց, որ առաջնորդվելով Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և միջազգային փորձի պահանջներով, Բանկի Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է «Շահութաբաժինների վճարման քաղաքականության» հաստատման, փոփոխման և լրացման վերաբերյալ որոշումների ընդունման լիազորությունը փոխանցել Բանկի Խորհրդին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Շահութաբաժինների վճարման քաղաքականության» հաստատման, փոփոխման և լրացման վերաբերյալ որոշումների ընդունման լիազորությունը փոխանցել Բանկի Խորհրդին:

կողմ՝ 183,032,063 ձայն կամ մասնակիցների ձայների 99.65%

դեմ՝ 646,000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.35%

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 8. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 01.2 կողավորմամբ հաստատելու մասին:

Վաղինակ Ստեփանյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Բանկի ներքին իրավական ակտերն առնվազն տարին մեկ անգամ վերանայելու օրենսդրական պահանջը, Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 23.10.2025 թ. որոշմամբ հաստատված «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» վերանայվել է, և հաշվի առնելով վերջինիս խմբագրմանը հանգեցնող օրենսդրական փոփոխությունների բացակայությունը, Բանկի Խորհրդի 25.05.2026 թ. որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» թողնել անփոփոխ՝ այն հաստատելով 2-րդ խմբագրությամբ՝ REG 01.2 կոդավորմամբ:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 01.2 կոդավորմամբ.

կողմ՝ 183,032,063 ձայն կամ մասնակիցների ձայների 99.65%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 646,000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.35%

անվավեր՝ 0 ձայն

Հարց 9. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Խորհրդի կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 02.2 կոդավորմամբ հաստատելու մասին:

Վաղինակ Ստեփանյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Բանկի ներքին իրավական ակտերն առնվազն տարին մեկ անգամ վերանայելու օրենսդրական պահանջը, Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 23.10.2025 թ. որոշմամբ հաստատված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Խորհրդի կանոնակարգը» վերանայվել է, և հաշվի առնելով վերջինիս խմբագրմանը հանգեցնող օրենսդրական փոփոխությունների բացակայությունը, Բանկի Խորհրդի՝ 25.05.2026 թ. որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Խորհրդի կանոնակարգը» թողնել անփոփոխ՝ այն հաստատելով 2-րդ խմբագրությամբ՝ REG 02.2 կոդավորմամբ:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Խորհրդի կանոնակարգը» 2-րդ խմբագրությամբ՝ REG 02.2 կոդավորմամբ.

կողմ՝ 183,032,063 ձայն կամ մասնակիցների ձայների 99.65%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 646,000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.35%

անվավեր՝ 0 ձայն

Աննա Բադոյանը հայտարարեց, որ ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են, առաջարկեց ցանկացողներին տալ հարցեր: Հարցեր չհնչեցին:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց բոլորին մասնակցության համար և հաստատեց Բանկի Խորհրդի պատրաստակամությունը՝ աջակցելու ղեկավարությանը սահմանված նպատակների և առանցքային ցուցանիշների ապահովման հարցում:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 15:10-ին:

Գագիկ Զաքարյան
Նախագահ

Աննա Բադոյան
Քարտուղար

ք. Երևան, 23 հունիսի 2026 թ.